

**<<Յունիբանկ>> ԲԲԸ բանկային հաշիվների բացման,
վարման, հսկման և փակման կարգ**

1.1 <<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերության <<Բանկային հաշիվների բացման, վարման, հսկման և փակման>> կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է <<Յունիբանկ>> ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) << ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական, իրավաբանական և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձանց, բանկի հետ կապված անձանց սպասարկման նպատակով Բանկում գործող սակագներով սահմանված արժույթներով, նրանց կամ նրանց կողմից նշված անձանց անունով, հաշիվների բացման, վարման, հսկման և փակման պայմանները:

1.2 Սույն կարգի սկզբունքներն են՝

1.2.1 հաճախորդների հավասարություն,

1.2.2 պայմանագրի ազատություն,

1.2.3 պայմանագրով հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքի սահմանումը:

Սույն կարգի իմաստով՝

1.2.4 **բանկային հաշիվ**՝ Բանկում վարվող հաճախորդի հաշիվ, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 50-րդ գլխի պահանջներին.

1.2.5 **Հաճախորդ**՝ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ, որը Բանկում ունի բանկային հաշիվ.

1.2.6 **դրամական միջոցներ**՝ բանկային հաշվին առկա դրամական միջոցներ /Հայաստանի Հանրապետության դրամ կամ արտարժույթ/.

1.2.7 **երրորդ անձ**՝ Բանկից և հաճախորդից բացի ցանկացած այլ անձ, բացառությամբ՝ Կենտրոնական բանկի, բանկերի ու <<Վարկային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային կազմակերպությունների, Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամի՝ <<Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

1.3 Սույն կարգի բոլոր հավելվածները հանդիսանում են սույն կարգի անբաժանելի մասերը:

1.4 Սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողությունը մասնաճյուղերում իրականացնում են կառավարիչը և հաճախորդների սպասարկման գծով պատասխանատու ղեկավարը, իսկ գլխամասային գրասենյակում՝ Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտի տնօրենը, Օպերացիոն վարչության պետը, VIP հաճախորդների հետ գործառնությունների վարչության պետը:

**ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Բանկային հաշիվների բացումն իրականացվում է հաճախորդի հետ պայմանագիր կնքելու միջոցով:

2.2 Հաճախորդների սպասարկումն իրականացնող Բանկի համապատասխան մենեջերը կամ գանձապահ-մենեջերը ընդունելով հաճախորդին և տեղեկանալով հաշիվ բացելու վերջինիս մտադրության մասին՝ պարտավոր է հաճախորդին ծանոթացնել նախատեսվող պայմանագրի պայմաններին և Բանկում հաշիվների սպասարկման գործող դրույքներին ու սակագներին:

2.3 Հաշիվը բացելու նպատակով.

2.3.1 ֆիզիկական անձ /ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ/ հաճախորդը Բանկ է ներկայացնում

- հաշվի բացման դիմում՝ Բանկի կողմից սահմանված ձևին համապատասխան /Հավելված 1/.
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ).
- Հանրային ծառայության համարանիշ /առկայության դեպքում/, կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ համապատասխան մարմնի տեղեկանք,
- Տեղեկանք՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վերաբերյալ, որը ստորագրվում է տվյալ անձի կողմից /Հավելված 5/

• այլ փաստաթղթեր, ըստ Բանկի պահանջի:

2.3.2 անհատ ձեռնարկատեր հաճախորդը Բանկ է ներկայացնում

- հաշվի բացման դիմում՝ Բանկի կողմից հաստատված ձևին համապատասխան /Հավելված 1/.
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ).
- պետական ռեզիստրի գրանցման վկայական,
- ՀՎՀՀ / Եթե պետ. ռեզիստրի ձևաթուղթը հին նմուշի է/
- ստորագրության և կնիքի արտատիպի /առկայության դեպքում/ նմուշի քարտը
- Եթե անհատ ձեռնարկատերը ունի հաշվապահական հաշվառման պատասխանատու, բանկի հետ ֆինանսական գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձ, ապա ստորագրության նմուշում նշվում է նաև այդ անձի ստորագրությունը:
- Իրավաբանական անձի կանոնադրությամբ կնիքի բացակայության դեպքում վերջինիս լիազոր ներկայացուցիչը փաթեթում առկա բոլոր ստորագրման ենթակա փաստաթղթերը վավերացնում է Բանկում՝ աշխատակցի ներկայությամբ:

• ըստ անհրաժեշտության նաև այլ փաստաթղթեր:

2.3.3 Իրավաբանական անձը, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ հաճախորդը /հիմնարկ, մասնաճյուղ, ներկայացուցչություն/ Բանկ է ներկայացնում.

2.3.3.1 Ռեզիդենտ իրավաբանական անձը՝

- կանոնադրության պետական ռեզիստրում գրանցված օրինակը /Եթե ներկայացվում է կանոնադրության պատճենը, ապա բոլոր էջերը պետք է կնքված և իրավասու անձի կողմից ստորագրված լինեն/,
- ՀՀ պետական ռեզիստրում հաճախորդի գրանցման վկայականը /պատճեն/ և ներդիրները՝ ընկերության տնօրենի տվյալների և կատարված փոփոխությունների վերաբերյալ.
- գործադիր մարմնի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու, բանկի հետ ֆինանսական գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների քարտերը:
- ՀՎՀՀ /պատճենը/.
- հաշվի բացման դիմումը՝ Բանկի կողմից հաստատված ձևին համապատասխան /Հավելված 1/
- Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի աշխատանքի ընդունման վերաբերյալ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը կամ հրամանը և/կամ աշխատանքային պայմանագիրը.
- Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի պատճենները.
- լիցենզիայի պատճենը՝ առկայության դեպքում.
- իրավաբանական անձի կանոնադրությամբ կնիքի նախատեսվածության դեպքում՝ կնիքի արտատիպը ստորագրության նմուշի վրա: Իրավաբանական անձի կանոնադրությամբ կնիքի բացակայության դեպքում վերջինիս լիազոր ներկայացուցիչը փաթեթում առկա բոլոր ստորագրման ենթակա փաստաթղթերը վավերացնում է Բանկում՝ աշխատակցի ներկայությամբ:
- ըստ անհրաժեշտության նաև այլ փաստաթղթեր:

• Պետական մարմինները ներկայացնում են 2.3.3.1 կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք հանդիսանում /պարունակում/ են պետական, ծառայողական գաղտնիք և ենթակա չեն հրապարակման:

2.3.3.2 Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը Բանկ է ներկայացնում՝

- հաշվի բացման դիմումը՝ Բանկի կողմից հաստատված ձևին համապատասխան.
- կանոնադրության նոտարական կարգով վավերացված և ապոստիլ արված օրինակը.
- կազմակերպության տնօրենի և գլխավոր հաշվապահի նշանակման հիմքերը,
- կազմակերպության տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրերի պատճենները,
- տեղեկություններ կազմակերպության սեփականատերերի մասին,
- տեղեկություններ կազմակերպության հետ փոխկապակցված անձանց մասին,
- հիմնադիր պայմանագրի նոտարական կարգով վավերացված և ապոստիլ արված օրինակը,
- գրանցման վկայականի նոտարական կարգով վավերացված և ապոստիլ արված օրինակը.
- ըստ անհրաժեշտության նաև այլ փաստաթղթեր:

2.4 Այն դեպքերում, երբ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կազմում տեղի է ունենում փոփոխություն, որը հանգեցնում է ստորագրության նմուշով ամրագրված անձանց փոփոխության, կամ հաճախորդի պահանջով բացվում է նոր հաշիվ, ապա հաճախորդը ներկայացնում է Բանկին փոփոխության վերաբերյալ համապատասխան քաղվածք հրամանից և Բանկից ստանում նոր ստորագրության նմուշի քարտ:

2.5 Հաճախորդի գործող և հին ստորագրության նմուշի քարտերը պահպանվում են փաստաթղթային փաթեթում, իսկ գործող ստորագրության նմուշի սքան արված տարբերակը՝ ծրագրի հաճախորդի տվյալների էլեկտրոնային բազայում:

2.6 Բանկի աշխատակիցը հաճախորդի համար հաշիվ բացելու և վարելու դեպքում պարտավոր է պարզել հաճախորդի վերաբերյալ <<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> կարգով տրամադրման ենթակա տեղեկությունները:

2.7 Ոչ ռեզիդենտ հաճախորդի, պարտատիրոջ կամ այլ անձի կողմից որպես գործակալ, ներկայացուցիչ կամ լիազորված անձ՝ մեկ այլ անձի հանդես գալու դեպքում, աշխատակիցը պարզում է այդ բանկային հաշվի կամ գործառնության իրական բենեֆիցիարին/շահառուին/:

2.8 Եթե հաճախորդը ոչ ռեզիդենտ է, ապա Բանկի աշխատակիցը պարզում և գրառում է նաև այդ անձանց կենսական շահերի կենտրոնը և եկամտի աղբյուրները:

2.9 Բանկի աշխատակիցը իրավունք ունի մերժելու հաշիվ բացելու կամ հաշիվը փակելու վերաբերյալ հաճախորդի դիմումը, եթե հաշվին մուտքագրվող միջոցները կամ ապագա հաշվետերը կասկածվում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ:

2.10 Բանկում արգելվում է բացել և վարել անանուն կամ մտացածին անուններով, ինչպես նաև թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ:

2.11 Բանկը հաշիվներ է բացում և վարում նաև օֆշորային տարածքներում գրանցված հաճախորդների համար՝ բացառությամբ << օրենսդրությամբ արգելված տարածքների:

2.12 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշիվների բացման և փակման վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով յուրաքանչյուր օր LotusNotes համակարգով ուղարկվում է Taxaccounts/CBANet@CBANet հասցեին: Առանց վերոգրյալ էլեկտրոնային հասցեից դրական պատասխանի ստացման՝ Բանկի աշխատակիցը իրավասու չէ հաճախորդի հաշիվներից իրականացնելու դեբետային գործարքներ:

2.13 Բանկը պատասխանատվություն չի կրում հիմնադիր փաստաթղթերում կատարված, բայց չգրանցված փոփոխությունների համար, եթե Հաճախորդի կողմից ժամանակին և սահմանված կարգով փոփոխված փաստաթղթերի կրկնօրինակները չեն ներկայացվել Բանկ:

ՉԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՃԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Հաճախորդը Բանկ է ներկայացնում Բանկային հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթերը, որի հիման վրա սպասարկող մենեջերը կամ գանձապահ-մենեջերը LS online ծրագրում բացում է անվանական հաշիվ՝ տվյալ հաճախորդին նույնականացնող վավերապայմաններով, կողմերի միջև համաձայնեցված պայմաններին համապատասխան և հաճախորդին է տրամադրում դրամարկղի մուտքի անդորրագիրը, գումարը դրամարկղ մուտքագրելու համար:

3.2. Մենեջերը կազմում է Բանկային հաշվի սպասարկման պայմանագիրը /Հավելված 2/, որը ստորագրվում է երկկողմանի՝ Հաճախորդի և Բանկի կողմից /Օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրեն կամ տնօրենի տեղակալ, իսկ մասնաճյուղերում՝ մասնաճյուղի կառավարիչ/:

3.3. Մենեջերը ծրագրում հաշիվ բացելուց հետո հաշվի ամբողջական փաթեթը ներկայացնում է մասնաճյուղի գործարքները հաստատող անձին՝ սպասարկման գծով տեղակալին կամ գլխավոր մենեջերին, գլխամասային գրասենյակում՝ օպերացիոն վարչության պետին կամ VIP հաճախորդների հետ գործառնությունների վարչության պետին՝ փաստաթղթային փաթեթի ամբողջականության ստուգման, հաշվի բացման գործարքը ծրագրում հաստատելու, դիմումը ստորագրելու և կնքելու համար:

3.4. Վերը նշված գործառնությունները ավարտելուց հետո հաշվի բացման դիմումը և ստորագրված պայմանագիրը ներկայացվում է մասնաճյուղերում՝ կառավարչին, իսկ գլխամասային գրասենյակում՝ Օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրենին՝ հաշվի բացման պայմանագրի և այլ փաստաթղթերի ստորագրման համար:

3.5. Բանկի և հաճախորդի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագիրը պետք է համապատասխանի տվյալ տեսակի հաշիվների համար Բանկում գործող սակագներին և պայմաններին:

Իրավաբանական անձ հաճախորդին տրամադրվում է Բանկի կողմից սահմանված ֆինանսական գործարքներ կնքելու լիազորություն ունեցող անձանց ստորագրությունների և կնիքի (իրավաբանական անձի կանոնադրությամբ կնիքի նախատեսվածության դեպքում) արտատիպի նմուշների քարտը: Իրավաբանական անձի կանոնադրությամբ կնիքի բացակայության դեպքում վերջինիս լիազոր ներկայացուցիչը փաթեթում առկա բոլոր ստորագրման ենթակա փաստաթղթերը վավերացնում է Բանկում՝ աշխատակցի ներկայությամբ:

3.6. Առանց էլեկտրոնային եղանակով, LotusNotes համակարգով Taxaccounts/CBANet@CBANet հասցեից ստացված հաշիվների բացման վերաբերյալ տեղեկատվության հաստատման, արգելվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշվով գործառնությունների իրականացումը:

3.7. Ժամանակավոր հաշիվների բացման դեպքում Հաճախորդը ներկայացնում է ֆիրմային անվանման գրանցման մասին համապատասխան պետական մարմնի որոշումը, որի հիման վրա բացվում է հաշիվը:

3.8. Ժամանակավոր հաշիվները ենթակա են փակման բացման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հաջորդող օրացուցային տարվա ավարտը:

3.9. Ժամանակավոր հաշիվները կհամարվեն հիմնական հաշիվ միայն Հաճախորդի կողմից Բանկային հաշվի բացման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

3.10. Տարեկան գույքագրման արդյունքում թերի փաստաթղթերով բացված բանկային հաշիվը ենթակա է փակման:

3.11. Իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր Հաճախորդների բանկային հաշիվների

գործերում առկա փաստաթղթերը ենթակա են համարակալման և ցուցակագրման՝ համաձայն Հավելված 2-ի:

3.12. Մինչև հաջորդ ամսվա 2-ը մասնաճյուղի կամ գլխամասային գրասենյակի գլխավոր մենեջերը ստորաբաժանման ղեկավարներին է ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում բացված ֆիզիկական անձանց բանկային հաշիվների անվանացանկը, որոնց փաթեթներում առկա փաստաթղթերը ենթակա են համարակալման և ցուցակագրման:

3.13. Հաճախորդի փաթեթի ամբողջականության համար պատասխանատվություն են կրում գործարքը կատարող և հաստատող անձիք, ինչպես նաև մասնաճյուղերի ղեկավարները, իսկ գլխամասային գրասենյակում՝ գործարքը կատարող և հաստատող անձիք, ինչպես նաև Օպերացիոն սպասարկման ղեկարտամենտի տնօրենը:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀՍԿՈՒՄԸ

4.1 Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Բանկը Հաճախորդի /հաշվետիրոջ/ կարգադրությամբ պետք է ընդունի և հաշվին մուտքագրի դրամական միջոցները, ինչպես նաև կատարի օրենքով սահմանված այլ գործառնություններ:

4.2 Ցանկացած հաշվի սպասարկման ժամանակ Բանկի աշխատակիցը իրականացնում է Հաճախորդի նույնականացում՝ ստուգելով ներկայացված գումարի տնօրինման հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առկա ստորագրությունների համապատասխանությունը ստորագրության նմուշի հետ:

4.3 Իրավաբանական անձ հաճախորդի դեպքում, վճարման հանձնարարականը պետք է ներկայացնի անձը, ում ստորագրությունն առկա է Բանկում պահվող ստորագրության նմուշներում:

4.4 Այն դեպքում, երբ վճարման հանձնարարականը ներկայացնողի ստորագրության նմուշը Բանկում առկա չէ, վերջինս հանդես է գալիս տվյալ գործարքի կատարման համար իրավաբանական անձի կողմից տրված պատշաճ լիազորագրով:

4.5 Եթե հաճախորդը ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ է, ապա նույնականացումն իրականացվում է նրա անձնագրի և/կամ այն փաստաթղթի միջոցով, համաձայն որի նա գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

4.6 Գործարքը /վճարման հանձնարարականը, դրամարկղի մուտքի կամ ելքի օրդերը և այլն/ մուտքագրվում է «գործառնական օր» ծրագիր սպասարկող մենեջերի կողմից, իսկ գործարքի հաստատումն իրականացվում է գլխավոր մենեջերի կամ սպասարկման գծով տեղակալի կողմից:

4.7 Բանկը կարող է հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործել՝ երաշխավորելով հաճախորդի այդ միջոցներն անարգել տնօրինելու իրավունքը:

4.8 Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները, և ոչ էլ դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու նրա իրավունքների նկատմամբ օրենքով կամ պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ սահմանել:

4.9 Հաճախորդի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անող անձանց իրավունքները հաճախորդը հավաստում է ՀՀ օրենսդրությամբ, սույն Կարգով, բանկային կանոններով, ու բանկային հաշվի սպասարկման պայմանագրով նախատեսված փաստաթղթերը Բանկին ներկայացնելու միջոցով /վճարման հանձնարարական, դրամարկղային չեկեր և այլն/:

4.10 Հաճախորդն իրավունք ունի կարգադրել Բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով: Բանկն այդ կարգադրությունն ընդունում է, եթե դրանում գրավոր նշված են անհրաժեշտ տվյալներ, որոնցով հնարավոր կլինի համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

4.11 Հաճախորդի հաշվից դրամական միջոցները Բանկը տալիս կամ փոխանցում է կնքված հաշվի սպասարկման պայմանագրի համաձայն, բայց ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտքագրվելու հաջորդ օրը, եթե այդ փաստաթղթով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:

4.12 Հաճախորդը Բանկի ծառայությունների դիմաց վճարում է իր հաշվում առկա միջոցներից կամ այլ եղանակով՝ Բանկի սակագներին և բանկային հաշվի պայմանագրին համապատասխան:

4.13 Առանց հաճախորդի կարգադրության հաշվում առկա դրամական միջոցները թույլատրվում է դուրս գրել դատարանի որոշմամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.14 Հաճախորդի հաշվում առկա դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկը վճարում է բանկային հաշվի սպասարկման պայմանագրով կամ Բանկի սակագներով սահմանված տոկոսներ, որոնց հաշվեգրումը իրակացվում է օրական, իսկ տոկոսագումարը մուտքագրվում է հաճախորդի հաշվին ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին աշխատանքային օրը: Տոկոսները վճարվում են բացառապես ՀՀ դրամով:

4.15 Բանկը երաշխավորում է բանկային հաշվի և հաշվով գործառնությունների, ինչպես նաև հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

4.16 Բանկը պարտավոր է հաճախորդի պահանջով տրամադրել հաշվի քաղվածքները: Հաշվի քաղվածքները տրամադրվում են միայն հաճախորդին կամ պատշաճ ձևով վավերացված լիազորագրի հիման վրա երրորդ անձին:

4.17 Հաճախորդն իրավունք ունի իր հաշվով գործարքը կասեցնել՝ գրավոր դիմում ներկայացնելով Բանկի սպասարկող ստորաբաժանման ղեկավարին:

4.18 Ավանդային և վարկային գործարքների սպասարկման համար բացված Բանկային հաշիվների ժամկետները սահմանվում են նվազագույնը տվյալ գործարքների տևողության չափով և ենթակա են փակման տվյալ գործարքների ավարտից հետո:

ԳԼՈՒԽ 5. <<ԲԱՆԿ-ՀԱՃԱԽՈՐԴ>> ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԵՎ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Սույն Կարգի դրույթներին համապատասխան՝ հաշիվը բացելուց հետո, հաճախորդը լրացնում է՝ <<Բանկ-Հաճախորդ>> համակարգին միանալու դիմում՝ Հավելված 3-ով սահմանված ձևին համապատասխան:

5.2. Դիմումը ներկայացվում է Վարչության նախագահի տեղակալին կամ օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրենին

5.3. Վարչության նախագահի տեղակալը կամ օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրենը դիմումը մակագրում է Տեղեկատվական անվտանգության դեպարտամենտին, որի աշխատակիցն ապահովում է՝ <<Բանկ-Հաճախորդ>> համակարգից օգտվելու թույլտվությունը:

5.4. Նշագրված դիմումի պատճենը ուղարկվում է դիմումն ուղարկած մասնաճյուղին, իսկ Գլխամասային գրասենյակ ներկայացված լինելու դեպքում՝ Օպերացիոն դեպարտամենտին:

5.5. Դրանից հետո պատրաստվում է <<Բանկ-Հաճախորդ>> համակարգից օգտվելու պայմանագիր, որը վավերացվում է Բանկի կողմից:

5.6. Հաճախորդը մասնաճյուղից ստանում է պայմանագրի իր օրինակը և ներկայանում Գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղ:

5.7. Հաճախորդին տրամադրվում է գրանցման անուն, գաղտնաբառ և բանալի՝ փակ ծրարով:

5.8. <<Բանկ-Հաճախորդ>> համակարգին միանալու նպատակով Բանկը հաճախորդի հետ կնքում է պայմանագիր /Հավելված 4/, Գլխամասային գրասենյակում պայմանագիրը կնքվում է՝ Օպերացիոն սպասարկման դեպարտամենտում, մասնաճյուղում՝ Սպասարկման սրահում:

5.9. <<Բանկ-Հաճախորդ>> համակարգից օգտվելիս՝ Հաճախորդի կողմից կատարած գործարքների հանձնարարականները արտատպվում են մենեջերի կողմից և ներկայացվում Դրամային-թղթակցային հարաբերությունների դեպարտամենտ՝ հաստատման:

5.10. ՀՀ դրամով իրականացվող գործարքներն իրականացվում են Հաճախորդի կողմից ինքնուրույն՝ հաստատվում են Բանկի կողմից:

5.11. Արտարժույթով գործարքներն իրականացվում են Հաճախորդի կատարած հանձնարարականների հիման վրա, ձևակերպվում են սպասարկող մենեջերի կողմից, և ներկայացվում Դրամային-թղթակցային հարաբերությունների դեպարտամենտ՝ հաստատման:

5.12. Բանկային օրվա ընթացքում մենեջերն անընդհատ հսկողություն է իրականացնում էլեկտրոնային վճարման հանձնարարականների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՓԱԿՈՒՄԸ

6.1 Բանկային հաշվի սպասարկման պայմանագիրը հաճախորդի դիմումով լուծվում է ցանկացած ժամանակ:

6.2 Բանկային հաշվի պայմանագիրը կարող է լուծվել նաև օրենքով և բանկային հաշվի պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

6.3 Հաշվում առկա դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա պահանջով փոխանցվում այլ հաշվի:

6.4 Բանկային հաշվի պայմանագրի լուծումը հիմք է հաճախորդի հաշիվը փակելու համար:

6.5 Հաճախորդի կողմից հաշվի փակման դեպքում ներկայացվում է դիմում Բանկի սպասարկող ստորաբաժանման ղեկավարի անվամբ, որտեղ պարտադիր պետք է նշվի հաշվի փակման պատճառը:

6.6 Հաճախորդի հաշիվը միակողմանի՝ Բանկի նախաձեռնությամբ, կարող է փակվել նաև այն դեպքում, երբ հաճախորդը մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվի միջոցով չի իրականացրել որևէ գործարք, և/կամ այդ հաշվի մնացորդը զրոյական է և/կամ չի բավարարում Բանկի գործող սակագների պահանջներին:

6.7 Փակված հաշիվների վերաբերյալ փաստաթղթերը պահվում են առանձին թղթապանակում:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

7.1 Մասնաճյուղերի կառավարիչներն ըստ պահանջի Մասնաճյուղային ցանցի կառավարման և օպերացիոն սպասարկման տնօրինության տնօրենին ներկայացնում են փակված հաշիվների ցանկը և փակման պատճառները:

7.2 Մասնաճյուղային ցանցի կառավարման և օպերացիոն սպասարկման տնօրինության տնօրենը մասնաճյուղերում և գլխամասային գրասենյակում փակված հաշիվների և դրանց պատճառների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Բանկի Վարչությանը:



ՃԱՆԱԶԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՅԱԹԵՐԹԻԿ

(Ֆիզիկական անձանց համար)

KNOW YOUR CUSTOMER APPLICATION FORM

(For Individuals only)

АНКЕТА ЗНАЙ СВОЕГО КЛИЕНТА

(Для физических лиц)

Հաճախորդի ԱԱՀ _____

Name of the Customer/Ф.И.О Клиента

Անձը հաստատող փաստաթուղթ _____

Passport details or ID card number/Паспортные данные или номер идентификационной карты

Գրանցման հասցե _____

Registration address/Адрес прописки

Փաստացի բնակության հասցե _____

Permanent residence address/Адрес проживания

Հեռախոս _____

Telephone/Телефон

E-mail

Գործունեության բնույթը և ոլորտը _____

Occupation details (main activity) and sector/Сущность и сфера деятельности

Հաճախորդի եկամտի աղբյուրները _____

Sources of income/Источник доходов

Կենսական շահերի կենտրոնը՝ ՀՀ, այլ _____

Center of vital interests/Центр социальных интересов RA/PA other/иной

Իրական շահառու առկա չէ առկա է (նշել իրական շահառուին) _____

Beneficial owner not applicable/ applicable (submit Beneficial owner)

Конечный бенефициар не имеется/имеется (указать конечного бенефициара)

Ռեզիդենտությունը՝ ՀՀ, այլ _____

Residency/Резидентность RA, PA other/иной

Բանկային հաշիվ բացելու պատճառը, նպատակը՝ այլ _____

The reason (purpose) of opening bank account - Other _____

Цель, причина открытия банковского счета - Иной _____

ավանդի ներդրում , վարկի ստացում , փոխանցում , փոխարկում , գումարի հավաքագրում ,

депозит , кредит , перевод , конвертация накопление

Deposit Credit , transfer , exchange , accumulation

Խնդրում եմ բացել բանկային հաշիվ հետևյալ արժույթներով AMD USD EUR RUR GBP

Please open account in/ Прошу открыть банковский счет в

Տեղեկություններ հաճախորդի հետ կապված՝ Բանկի հետ փոխկապակցված (իրավաբանական և ֆիզիկական) անձանց վերաբերյալ

Information about Bank related entities and individuals related to Customer

Информация о лицах (физических и юридических) связанных с Клиентом- взаимосвязанных с Банком

Հաճախորդի ստորագրություն

Customer's signature/Подпись Клиента

**Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտ (ՕՀՀԱ)
Foreign Account Tax Compliance Act (FATCA)**

Закон о налогообложении иностранных счетов

Ունեմ հետևյալ ցուցիչները (նշել տարբերակներից մեկը կամ մեկից ավելին)

I have the following indicia (tick one version or more)

У меня есть следующие показатели (указать один из вариантов или более)

1. ԱՄՆ քաղաքացիություն-երկքաղաքացիություն/US citizenship-dual citizenship/Гражданство США-двойное

гражданство

այո/yes/да ոչ/no/нет

2. ԱՄՆ ռեզիդենտ/US resident/Резидент США

այո/yes/да ոչ/no/нет

3. ԱՄՆ Գրին քարտ /US Green Card/Грин-карта США

այո/yes/да ոչ/no/нет

4. ԱՄՆ-ում էական ներկայություն ունեցող անձ (183 օր ֆիզիկապես գտնվել է ԱՄՆ-ում վերջին 3 տարվա ընթացքում, որից 31 օր-ը՝ ընթացիկ տարում)

An individual having substantial presence in the US (183 days during the 3-year period, including 31 days during the current

year)/Лицо имеющее существенное присутствие в США (183 дня в течение трех лет, включая 31 день в текущем году)

այո/yes/да ոչ/no/нет

5. ԱՄՆ ծննդավայր/US birthplace/Место рождения-США

այո/yes/да ոչ/no/нет

6. ԱՄՆ հասցե (ներառյալ փոստային հասցե) կամ ԱՄՆ հարկային ռեզիդենտություն

A US residence address (including mailing address) or US tax residency/Адрес в США

(включительно почтовый адрес) или налоговое резидентство

այո/yes/да ոչ/no/нет

- 7.ԱՄՆ հեռախոսահամար/US telephone number/Номер телефона в США
- այո/yes/да ոչ/no/нет
- 8.ԱՄՆ հաշիվներին միջոցները փոխանցելու ստանդարտ հանձնարարականներ
Standing instructions to transfer funds to an account maintained in the US/Постоянно действующие инструкции для перечисления средств на счета открытые в США
- այո/yes/да ոչ/no/нет
- 9.ԱՄՆ հասցե ունեցող անձին տրամադրված ստորագրության իրավունք կամ լիազորագիր
A power of attorney or signatory authority granted to a person with a US address/Доверенность или право на подпись предоставленное лицу имеющему адрес в США
- այո/yes/да ոչ/no/нет
- 10.ԱՄՆ-ում փոստային կամ «Անվանական, հաճախորդի անունով» հասցե
An “in-care-of” address or a “hold mail” US address that is the sole address of the account holder/Почтовый или “именной” адрес Клиента в США
- այո/yes/да ոչ/no/нет
- 11.ԱՄՆ այլ ցուցիչ/Other US indicia/Иной показатель США
- այո/yes/да ոչ/no/нет
- 12.ԱՄՆ ցուցիչ առկա չէ/No US indicia/Показателя США не имеется

2.1 ՈՀանդիսանում եմ ԱՄՆ անձ
I certify that I am a US person
Являюсь субъектом США

2.2 ՈՉեմ հանդիսանում ԱՄՆ անձ
I am not a US person
Не являюсь субъектом США

ԱՄՆ անձ հանդիսանալու դեպքում (Քաղաքացիություն, Գրին քարտ, մշտական US ռեզիդենտ և այլն) պարտավորվում եմ ստորագրել W-9 ձևաթուղթը և բանկային գաղտնիքից հրաժարվելու վերաբերյալ հայտարարագիր, **If I am a US person** (citizen/Green Card holder/permanent US resident, etc.) I oblige to sign W9 form and Declaration of waiver from bank secrecy.

Если окажусь субъектом США, обязуюсь подписать форму W9 и заявление об отказе от банковской тайны. ԱՄՆ ցուցիչի առկայության դեպքում պարտավորվում եմ հաստատել (W-9 ձևաթուղթով և բանկային գաղտնիքից հրաժարվելու վերաբերյալ հայտարարագրով) կամ չհաստատել (W-8 ձևաթուղթով) ԱՄՆ անձի կարգավիճակը:

In case of any US indicia found I oblige to confirm the status of being a US person (W-9 form and Declaration of waiver from bank secrecy) or not (W-8 form).

В случае выявления показателя США обязуюсь подтвердить (формой W9 и заявлением об отказе от банковской тайны) или не подтвердить (формой W8) статус субъекта США.

Եթե ԱՄՆ ցուցիչ առկա չէ, և ես չեմ հանդիսանում ԱՄՆ անձ, ապա հավաստում եմ իրական շահառուի օտարերկրյա կարգավիճակը: Միաժամանակ հայտարարում եմ, որ ուսումնասիրել եմ այս ձևաթղթի տեղեկությունները և, հաստատում եմ, որ այն ճշմարիտ է և ամբողջական: Բացի այդ, սխալ վկայություն տալու համար պատիժ կրելու սպառնալիքով, հավաստում եմ, որ:

Ես հանդիսանում եմ այս ձևաթղթի հետ առնչվող ողջ եկամտի իրական շահառու հանդիսացող անձը (կամ լիազորված եմ ստորագրել այն անհատի անունից, որը հանդիսանում է իրական շահառու), կամ օգտագործում եմ այս ձևաթուղթը փաստաթղթերով ձևակերպելու ինձ որպես անհատ, որը հանդիսանում է օտարերկրյա ֆինանսական հաստատության սեփականատեր կամ հաշվետեր:

Այս ձևաթղթի 1-ին տողում նշված անձն ԱՄՆ անձ չէ:

Այն եկամուտը, որին վերաբերում է այս ձևաթուղթը.

(ա) ուղղակիորեն կապված չէ Միացյալ Նահանգներում առևտրային գործունեության իրականացման հետ,

(բ) ուղղակիորեն կապված է, սակայն ենթակա չէ հարկման եկամտահարկի մասին կիրառվող միջազգային պայմանագրի ներքո, կամ

(գ) հանդիսանում է գործընկերոջ բաժինը՝ գործընկերության ուղղակիորեն կապ ունեցող եկամտի մեջ:

Բացի դրանից, ես լիազորում եմ, որ այս ձևաթուղթը տրամադրվի ցանկացած հարկային գործակալի, որը կարող է վերահսկել, ստանալ և պահառության վերցնել այն եկամուտը, որի իրական շահառուն եմ ես, կամ ցանկացած հարկային գործակալին, որը կարող է կատարել մասհանումներ կամ վճարումներ այն եկամտից, որի իրական շահառուն եմ ես: **Ես համաձայն եմ 30 օրվա ընթացքում ներկայացնել նոր ձևաթուղթ, եթե սույն ձևաթղթում արված որևէ հավաստում դառնա ոչ ճիշտ:**

In case any US indicia is not found and I am not a US person I certify the foreign Status of Beneficial Owner and declare that I have examined the information on this form and to the best of my knowledge and belief it is true, correct, and complete. I further certify under penalties of perjury that:

qI am the individual that is the beneficial owner (or am authorized to sign for the individual that is the beneficial owner) of all the income to which this form relates or am using this form to document myself as an individual who is the owner or account holder of a foreign financial institution,

qThe person named on line 1 of this form is not a U.S. person,

qThe income to which this form relates is:

- (a) not effectively connected with the conduct of a trade or business in the United States,
- (b) effectively connected but is not subject to tax under an applicable income tax treaty, or
- (c) the partner's share in a partnership's effectively connected income,

Furthermore, I authorize this form to be provided to any withholding agent that has control, receipt, or custody of the income of which I am the beneficial owner or any withholding agent that can disburse or make payments of the income of which I am the beneficial owner. **I agree that I will submit a new form within 30 days if any certification made on this form becomes incorrect.**

Если показатель США не выявлен и я не являюсь субъектом США, то объявляю об иностранном статусе конечного бенефициара и с угрозой понесения наказания за дачу ложных показаний, заявляю, что изучил информацию выложенную в данной форме и удостоверился, что все изложенное является полной правдой. Кроме того с угрозой наказания за дачу ложных показаний, подтверждаю, что:

Являюсь конечным бенефициаром доходов относящихся к данной форме (или уполномочен ставить подпись от имени лица, которое является конечным бенефициаром), или использую данную форму для документированного оформления себя лицом, являющимся владельцем или владельцем счетов иностранного финансового учреждения

Лицо указанное в 1-ой строке данной формы не является субъектом США

Доходы, к которым относится данная форма:

- (а) непосредственно не связаны с ведением деловой или коммерческой деятельности в США
- (б) непосредственно связаны, но не подлежат налогообложению по применимому международному договору о подоходном налоге, или
- (в) являются долей партнера в доходе непосредственно связанным с партнерством

Кроме того, я разрешаю, чтобы данная форма была предоставлена любому налоговому агенту, который может контролировать, получать и брать на сохранение те доходы, фактическим владельцем которых я являюсь, или любому налоговому агенту, который может делать вычеты или выплаты с доходов, конечным бенефициаром которых я являюсь. **Я согласен в течение 30-и дней предоставить обновленную форму, если какие либо утверждения сделанные в данной форме станут неверными.**

Հանձնորդի ստորագրություն
Name, Signature/Ф.И.О., Подпись

Ամսաթիվ/ օր/ամս/տարի
Date/Дата



ՃԱՆԱԶԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ, ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ (իրավաբանական անձանց համար)

KNOW YOUR CUSTOMER APPLICATION FORM

(For entities)

АНКЕТА ЗНАЙ СВОЕГО КЛИЕНТА

(Для юридических лиц)

Իրավաբանական անձի անվանում _____
Name of the Entity/Наименование организации

Գրանցման հասցե _____
Registration address/Адрес регистрации

Փաստացի գործունեության հասցե _____
Actual business address/Фактический адрес организации

Հեռախոս _____
 Telephone/Телефон _____ E-mail _____
 Պետ.գր. վկ.համար _____
 State Registration Certificate N _____ ՀՎՀՀ/Tax code _____ Լիցենզիա/License (եթե առկա է/if any/если есть)
 N Свидетельства о регистрации ИНН _____ лицензия _____
 Գործարար թնութագիրը _____
 Business profile/Сущность и сфера деятельности _____
 Միջոցների ծագման աղբյուրը _____
 Source of funds/Источник средств _____
 Կենսական շահերի կենտրոնը _____ ՀՀ այլ _____
 Center of vital interests/ Центр социальных интересов RA/RA other _____
 Իրական շահառու առկա չէ, առկա է (նշել իրական շահառուին) _____
 Beneficial owner not applicable/applicable (submit Beneficial owner) _____
 Конечный бенефициар не имеется/имеется (указать конечного бенефициара) _____
 Կոնտրագենտների վերաբերյալ _____
 տեղեկատվություն _____
 Information about counterparts/Информация о контрагентах _____
 Ռեզիդենտությունը՝ ՀՀ այլ _____
 Residency/Резидентность RA/PA other/иная _____
 Բանկային հաշիվ բացելու պատճառը, նպատակը՝ այլ _____

 The reason (purpose) of opening bank account - Other _____
 Цель, причина открытия банковского счета - Иная _____

 ավանդի ներդրում , վարկի ստացում , փոխանցում , փոխարկում , գումարի հավաքագրում ,
 deposit credit , transfer , exchange , accumulation
 депозит , кредит , перевод , конвертация накопление
 Խնդրում եմ բացել բանկային հաշիվ հետևյալ արժույթներով AMD, USD, EUR, RUR, GBP
 Please open account in/Прошу открыть банковский счет в _____
 Տեղեկություններ հաճախորդի՝ բանկի հետ փոխկապակցված (իրավաբանական և ֆիզիկական)
 անձանց վերաբերյալ _____
 Information about Bank related entities and individuals related to Customer _____
 Информация о лицах (физических и юридических) связанных с Клиентом- взаимосвязанных с Банком _____

 Հաճախորդի ստորագրություն և կնիք /առկայության դեպքում/ _____
 Signature and stamp /if any/Подпись Клиента и печать /если есть/ _____

**Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտ (ՕՀՀՀԱ)
Foreign Account Tax Compliance Act (FATCA)**

Закон о налогообложении иностранных счетов

Ունեմ հետևյալ ցուցիչները (նշել տարբերակներից մեկը կամ մեկից ավելին)

I have the following indicia (tick one of the versions or more than one)

У меня есть следующие показатели (указать один из вариантов или более)

ԱՄՆ-ում գրանցված կազմակերպություն/USresident/Резидент США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ-ի հարկային ռեզիդենտ/US tax resident/Налоговый резидент США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ հասցե (ներառյալ փոստային հասցե)

A US residence address (including US mailing address) Адрес в США(включительно почтовый адрес) այո/yes/да

ոչ/no/нет

ԱՄՆ հեռախոսահամար/US telephone number/Номер телефона в США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ հաշիվներին միջոցները փոխանցելու ստանդարտ հանձնարարականներ
Standing instructions to transfer funds to an account maintained in the US/Постоянно действующие инструкции для перечисления средств на счета открытые в США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ հասցե ունեցող անձին տրամադրված ստորագրության իրավունք կամ լիազորագիր
A power of attorney or signatory authority granted to a person with a US address

Доверенность или право на подпись предоставленное лицу имеющему адрес в США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ-ում փոստային կամ «Անվանական, հաճախորդի անունով» հասցե

An “in-care-of” address or a “hold mail” US address that is the sole address of the account holder/Почтовый или “именной” адрес Клиента в США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ սեփականատեր անձ 10 % և ավելի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ
US owner with more than 10% direct or indirect ownership/

Собственник США с более чем 10% прямого или косвенного владения

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ այլ ցուցիչ//Other US indicia/Иной показатель США

այո/yes/да ոչ/no/нет

ԱՄՆ ցուցիչ առկա չէ/No US indicia/Показателя США не имеется

Հանդիսանում եմ ԱՄՆ անձ

Չեմ հանդիսանում ԱՄՆ

անձ

I certify that

I am a US person
Являюсь субъектом США

I am not a US person
Не являюсь субъектом

США

ԱՄՆ անձ հանդիսանալու դեպքում պարտավորվում եմ ստորագրել W-9 ձևաթուղթը և բանկային գաղտնիքից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությունը,

If **I am a US person** I oblige to sign W9 form and Declaration of waiver from bank secrecy.

Если окажусь субъектом США, обязуюсь подписать форму W9 и заявление об отказе от банковской тайны.

ԱՄՆ ցուցիչի առկայության դեպքում պարտավորվում եմ հաստատել (W-9 ձևաթղթով և բանկային գաղտնիքից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությամբ) կամ չհաստատել (W-8 ձևաթղթով) ԱՄՆ անձ կարգավիճակը:

In case of any US indicia found I oblige to confirm the status of being a US person (W-9 form and Declaration of waiver from bank secrecy) or not (W-8 form).

В случае выявления показателя США обязуюсь подтвердить (формой W9 и заявлением об отказе от банковской тайны) или не подтвердить (формой W8) статус субъекта США.

Եթե ԱՄՆ ցուցիչ առկա չէ, և ես չեմ հանդիսանում ԱՄՆ անձ, ապա հավաստում եմ իրական շահառուի օտարերկրյա կարգավիճակը: Միաժամանակ հայտարարում եմ, որ ուսումնասիրել եմ այս ձևաթղթի տեղեկությունները և, հաստատում եմ, որ այն ճշմարիտ է և ամբողջական: Բացի այդ, սխալ վկայություն տալու համար պատիժ կրելու սպառնալիքով, հավաստում եմ, որ.

այն կազմակերպությունը, որը նույնականացված է սույն ձևաթղթի 1 տողում, հանդիսանում է այս ձևաթղթի հետ առնչվող ողջ եկամտի իրական շահառուն

սույն ձևաթղթի 1 տողում նույնականացված կազմակերպությունն ԱՄՆ անձ չէ,

այն եկամուտը, որին վերաբերում է սույն ձևաթուղթը՝ (ա) ուղղակիորեն չի առնչվում Միացյալ Նահանգներում իրականացվող առևտրային գործունեության կամ բիզնեսի հետ, (բ) ուղղակիորեն առնչվում է, սակայն ենթակա չէ հարկման եկամտահարկի մասին միջազգային համաձայնագրի ներքո, կամ (գ) հանդիսանում է գործընկերոջ մասնաբաժին՝ գործընկերության ուղղակիորեն առնչվող եկամտում:

բրոքերային գործարքների կամ բարտերային փոխանակման դեպքում իրական շահառուն ազատված օտարերկրյա անձ է՝ ինչպես սահմանված է հրահանգներում:

Բացի դրանից, ես լիազորում եմ, որպեսզի այս ձևաթուղթը տրամադրվի ցանկացած հարկային գործակալի, որը կարող է վերահսկել, ստանալ և պահառության վերցնել այն եկամուտը, որի իրական շահառուն 1 տողում նշված կազմակերպությունն է, կամ ցանկացած հարկային գործակալին, որը կարող է անել մասհանումներ կամ վճարումներ այն եկամտից, որի իրական շահառուն 1 տողում նշված կազմակերպությունն է:

Ես համաձայն եմ 30 օրվա ընթացքում ներկայացնել նոր ձևաթուղթ, եթե սույն ձևաթղթում արված որևէ հավաստում դառնա ոչ ճիշտ:

In case any US indicia is not found and I am not a US person I certify the foreign Status of Beneficial Owner and declare that I have examined the information on this form and to the best of my knowledge and belief it is true, correct, and complete. I further certify under penalties of perjury that:

q The entity identified on line 1 of this form is the beneficial owner of all the income to which this form relates

q The entity identified on line 1 of this form is not a US person,

q The income to which this form relates is:

(a) not effectively connected with the conduct of a trade or business in the United States,

(b) effectively connected but is not subject to tax under an income tax treaty, or

(c) the partner's share of a partnership's effectively connected income, and

q For broker transactions or barter exchanges, the beneficial owner is an exempt foreign person as defined in the instructions.

Furthermore, I authorize this form to be provided to any withholding agent that has control, receipt, or custody of the income of which the entity on line 1 is the beneficial owner or any withholding agent that can disburse or make payments of the income of which the entity on line 1 is the beneficial owner.

I agree that I will submit a new form within 30 days if any certification on this form becomes incorrect.

Если показатель США не выявлен и я не являюсь субъектом США, то объявляю об иностранном статусе конечного бенефициара и с угрозой понесения наказания за дачу ложных показаний, заявляю, что изучил информацию выложенную в данной форме и удостоверился, что все изложенное является полной правдой. Кроме того с угрозой наказания за дачу ложных показаний, подтверждаю, что:

Организация, указанное на 1-ой строке данной формы является конечным бенефициаром всех доходов относящихся к данной форме

Организация, указанная на 1-ой строке данной формы не является субъектом США

Доходы, к которым относится данная форма:

- (a) непосредственно не связаны с ведением деловой или коммерческой деятельности в США
 - (б) непосредственно связаны, но не подлежат налогообложению по применимому международному договору о подоходном налоге, или
 - (в) являются долей партнера в доходе непосредственно связанным с партнерством
- Для брокерских сделок или бартерских обменов конечный бенефициар является освобожденным иностранным лицом, как указано в инструкции.

Кроме того, я разрешаю, чтобы данная форма была предоставлена любому налоговому агенту, который может контролировать, получать и брать на сохранение те доходы, фактическим владельцем которых является организация указанная на 1-ой строке, или любому налоговому агенту, который может делать вычеты или выплаты с доходов, конечным бенефициаром которых является организация указанная на 1-ой строке.

Я согласен в течение 30-и дней предоставить обновленную форму, если какие либо утверждения сделанные в данной форме станут неверными.

Հաճախորդի ստորագրություն և կնիք /տվյալություն-դեպոզիտ/ _____

Ամսաթիվ/ _____

ՕՕ/աա/տստստ

Signature and stamp /if any/

Date/Дата

Подпись Клиента и печать (если имеется)

- Հավաստիացնում եմ, որ ես իրավասու եմ ստորագրել վերոնշյալ իրավաբանական անձի համար:
I certify that I have the capacity to sign for the entity identified on this form.
Я подтверждаю, что вправе подписывать для лица указанного в данной форме.

ԲԱՆԿԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Bank's Notes

Заметки Банка

Բացել հաշիվ

account/счет

Open

Открыть _____

Թույլատրում եմ՝

Confirm

Разрешаю

Ղեկավար _____

Director

Руководитель

Հաշիվը բացված է

The account is open

Счет открыт

Հաշվեհամար Account number Номер счета	Արժույթ Currency Валюта	Հաշվեկշռային հաշիվ Balance account Балансовый счет

Հաշիվը բացելու և հաշվով գործառնություններ կատարելու փաստաթղթերը ստուգված են
The documents for opening and maintenance of the account are checked
Документы необходимые для открытия счета и проведения операций по счету проверены

Կատարող անձ _____
Executor
Исполнитель

Սպասարկման գծով
պատասխանատու անձ _____
Responsible for service
Лицо ответственное за обслуживание

Ստորաբաժանման
ղեկավար _____
Head of division
Руководитель подразделения

_____ 201



**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ -----թ. Երևան
-- ---2014թ.**

<<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ Բանկ, ի դեմս Վարչության նախագահ Վարդան Աթայանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, և _____ այսուհետ՝ Հաճախորդ. ի դեմս ----- / անձնագիր -----տրված է -----ի կողմից, ----- թ. ով գործում է կանոնադրության հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Բանկը Հաճախորդի անունով բացում է բանկային հաշիվ/ներ՝ հետևյալ հաշվեհամար/ներ/ով

1.2. ----- / AMD հաշիվ /

1.3. ----- / USD հաշիվ /

1.4. ----- / EUR հաշիվ /

1.5. ----- / RUR հաշիվ /

1.6. Դրանցով գործառնություններն իրականացվում են ՀՀ օրենսդրությանը և Բանկի ներքին կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

1.7 Պայմանագրով բացված հաշիվներով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները. հաշիվների հաշվարկավճարային և հաշվարկա-դրամարկղային սպասարկում, արտարժույթի գնման և վաճառքի գործառնություններ, հաշվի ազատ մնացորդի տեղաբաշխում, արժեթղթերի ձեռքբերում և հավատարմագրային/լիազորագրային կառավարում, ֆինանսական գործակալի /ներկայացուցչի ծառայությունների մատուցում, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, հաճախորդի կողմից կատարվելիք գործարքների ֆինանսատնտեսագիտական փորձաքննություն, հաճախորդի կողմից հաշվի ազատ մնացորդի այլ կերպ տնօրինում և այլ ծառայությունների մատուցում: Նշված գործարքներն, օրենսդրությամբ սահմանված դեպքերում, իրականացվում են համապատասխան պայմանագրերի հիման վրա:

1.8 Հաճախորդի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է տոկոսագումար՝ Բանկում գործող բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքով: Տոկոսագումարի հաշվարկումը կարող է կատարվել նաև պայմանագրային հիմունքներով՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

1.9 Հաշվարկված տոկոսագումարները՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում գումարվում են Հաճախորդի հաշիվներում առկա դրամական միջոցներին:

1.10 Տոկոսների հաշվարկներում օգտագործվող տարվա օրերի քանակը ընդունվում է 365 օր:

2. Բանկն իրավունք ունի՝

1.1 Մինչև հաշիվներում առկա միջոցների վերադարձը ինքնուրույնաբար տնօրինել այդ միջոցները երաշխավորելով Հաճախորդի՝ այդ միջոցներն անարգել տնօրինելու իրավունքը:

1.2 Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ վճարվող տոկոսների չափը, որոնք ուժի մեջ կմտնեն Բանկի կողմից ընդունված որոշման հրապարակման պահից:

1.3 Բանկն իրավասու է մերժել և չկատարել Հաճախորդի կողմից տրված հաշվարկա-դրամարկղային գործառնությունների հանձնարարականները, եթե Հաճախորդի կողմից խախտվել են ՀՀ օրենսդրությունը, հաշվա-դրամարկղային փաստաթղթեր կազմելու, լրացնելու կարգը, ժամկետները և սույն պայմանագրի պայմանները:

1.4 Կատարած գործառնությունների դիմաց Հաճախորդի հաշիվներից միակողմանիորեն գանձել Բանկում գործող համապատասխան գործառնության համար սահմանված վճարը:

1.5 Հաճախորդի կողմից սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տվյալները չտրամադրելու կամ սխալ տվյալներ տրամադրելու կամ այդ տվյալներում փոփոխություններ լինելու դեպքում դրանց մասին Բանկին չտեղեկացնելու համար Հաճախորդից գանձել տույժ ----- /-----/ ՀՀ դրամի չափով:

1.6 Եթե կատարած ծառայությունների դիմաց վճարելու համար Հաճախորդի հաշվի գումարը չի բավարարում և երաշխիք չկա հետագայում վճարման, Բանկը կարող է մերժել գործարքի կատարումը:

1.7 Ուշադրության կենտրոնում պահել և հետազոտության ենթարկել Հաճախորդի հաշիվը, դրա շարժը, բացառելու համար օրենքին հակասող գործարքների իրականացումը: Եթե Բանկին հայտնի է դառնում Հաճախորդի անօրինական, հանցավոր կամ ոչ պատշաճ կերպով իրականացված գործարքների մասին, Բանկն իրավասու է անմիջապես դադարեցնել նման գործարքների իրականացումը՝ ընդհուպ մինչև Հաճախորդի հաշվի փակումը՝ առանց համապատասխան նախազգուշացման:

1.8 Սույն պայմանագրի 3.6. կետում նշված հանձնարարականների ներկայացման և գործարքների կատարման ընթացքում զանգահարել Հաճախորդի կողմից տրամադրված հեռախոսահամար(ներ)ին՝ գործարքի կատարման լրացուցիչ հաստատում ստանալու և Բանկի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

1.9 Մերժել հեռախոսային կապի միջոցով Հաճախորդի կողմից ներկայացված 3.6. կետում նշված հանձնարարականի կատարումը, եթե՝

ա) Հաճախորդը չի տրամադրում ճշգրիտ պատասխաններ՝ Հաճախորդին նույնականացնելու նպատակով ներկայացվող հարցերին,

բ) Հաճախորդը չի հայտնում գաղտնաբառը,

գ) Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:

2. Բանկը պարտավոր է՝

2.1 Հաճախորդին մատուցել հաշվի սպասարկման ծառայություններ, այդ թվում հաշվի վարում և Հաճախորդի հանձնարարությամբ հաշվարկային, դրամարկղային և այլ բանկային գործառնությունների կատարում, որոնք ՀՀ գործող օրենսդրությամբ արգելված չեն ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար:

2.2 Ապահովել Հաճախորդի հաշվով/ներով/ գործառնությունների գաղտնիությունը ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան:

2.3 Հաճախորդի հաշվից գումար դուրս գրել միայն նրա համաձայնությամբ կամ հանձնարարությամբ՝ բացառությամբ 2.4. կետի:

2.4 Հաճախորդի հաշվում միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս գրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ և հերթականությամբ:

2.5 Ապահովել հաշվում հաշիվներում առկա դրամական միջոցների, և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների վերադարձը Հաճախորդի առաջին իսկ պահանջով՝ սույն պայմանագրով նախատեսված պայմաններով:

2.6 Գործել հեռախոսային կապի միջոցով ստացված սույն կետում նշված գործառնություններին և գործարքներին վերաբերող Հաճախորդի հանձնարարականների համաձայն.

1. ա) Բանկին տրամադրված հաղորդակցման տվյալների (փոստային և էլեկտրոնային հասցեի, հեռախոսահամար(ներ)ի, այդ թվում՝ բջջային հեռախոսահամար (ներ)-ի) փոփոխում,

2. բ) հաշվի/հաշիվների մնացորդի, հաշվով/հաշիվներով գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում:

2.7 Կատարել Հաճախորդի հանձնարարականները՝ Հաճախորդի նույնականացումը պատշաճ կատարելուց հետո (Հաճախորդի կողմից տրամադրված գաղտնաբառի հիման վրա)

2.8 Հեռախոսազանգի միջոցով, բացառապես սույն պայմանագրի 3.6. կետում նշված հանձնարարականների, ներկայացման ընթացքում Հաճախորդի նույնականացումը կատարվում է Բանկի աշխատակցի կողմից՝ Բանկում առկա Հաճախորդի տվյալների վերաբերյալ Հաճախորդին ներկայացվող հարցերի հիման վրա:

3. Հաճախորդն իրավունք ունի՝

3.1 Ինքնուրույնաբար տնօրինել իր հաշիվները, առաջին իսկ պահանջով ետ ստանալ հաշիվներում առկա դրամական միջոցները՝ հաշվարկված տոկոսների հետ միասին:

3.2 Բանկին տալ հաշվարկա-դրամարկղային սպասարկման հանձնարարություններ և կարգադրություններ, կատարել հարցում հանձնարարականների կատարման վերաբերյալ:

3.3 Պահանջել և ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող հաշվարկա-դրամարկղային գործառնությունների և այլ բանկային ծառայությունների իրականացման կարգի և պայմանների վերաբերյալ գործող կանոններին և հաստատված սակագներին:

3.4 Կարգադրել Բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այլ անձանց հանդեպ Հաճախորդի պարտավորությունների կատարման հետ:

3.5 Ստանալ իր հաշվի քաղվածքները ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը՝

- էլեկտրոնային _____
- կամ կապի այլ միջոցներով _____
- Փոստային կապի միջոցով _____
- Բանկի տարածքում՝ առձեռն:-----

4. Հաճախորդը պարտավոր է՝

4.1 Բանկին տրամադրել իր վերաբերյալ ամբողջական և հավաստի տվյալներ /հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, փաստացի հասցե/, որով Բանկը հնարավորություն կունենա ցանկացած պահի կապ հաստատել իր հետ, ինչպես նաև այդ տվյալներում փոփոխություններ լինելու դեպքում այդ մասին անմիջապես տեղյակ պահել Բանկին՝ տրամադրելով փոփոխված տվյալները:

4.2 30 օրվա ընթացքում բանկին տեղեկացնել/տրամադրել FATCA (Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտ) կարգավիճակի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն (ներառում է ԱՄՆ-ի հետ կապված ցանկացած տվյալի, հանգամանքի փոփոխություն):

4.3 Բանկի կողմից սահմանված կարգով լրացնել և Բանկին տրամադրել իր հաշվով գործառնություններ իրականացնող լիազորված անձանց ստորագրությունների նմուշները և պահանջվող այլ փաստաթղթերը:

4.4 Պահպանել ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն պայմանագրով և Բանկի ներքին կանոններով, որոշումներով և կարգերով սահմանված գործառնությունների իրականացման պահանջները:

4.5 Բանկի կողմից իրականացվող հաշվարկային և դրամարկղային գործառնությունների, ինչպես նաև բանկային գործառնությունների համար մինչև գործարքի իրականացումը Բանկին վճարել միջնորդավճար՝ Բանկի կողմից սահմանված սակագներով: Կատարված ծառայության դիմաց գանձումը/վճարումը իրականացվում է Բանկի կողմից Հաճախորդի հաշիվներից գումարները դուրս գրելու եղանակով կամ Հաճախորդի վճարման հանձնարարագրի հիման վրա:

4.6 Հաշվով գործառնություններ կատարելու կարգադրություններ կամ հանձնարարականներ տալու դեպքում Բանկին ներկայացնել լիազորված անձանց անձը հաստատող փաստաթուղթ: Պայմանագիրը կորցնելու և լիազորված անձանց իրավասությունները դադարեցնելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնել Բանկին:

4.7 Հնգօրյա ժամկետում Բանկին տեղեկացնել Հաճախորդի կազմակերպա-իրավական տեսակի վերագրանցման, բնակության վայրի և հեռախոսահամարների, կանոնադրության և ցանկացած այլ փոփոխությունների մասին:

4.8 Հաճախորդին նույնականացնելու նպատակով Հաճախորդը պարտավոր է հայտնել իր նույնականացման տվյալները՝ կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն, հեռախոսահամար(ներ)ը և լրացնել ստորև նշված գաղտնաբառը՝

1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11	1.12
-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	------	------	------

4.9 Հատուցել Բանկին սույն պայմանագրի 3.6. կետի շրջանակներում տրված հանձնարարականների ընդունման և/կամ դրանց համաձայն գործելու հետևանքով Բանկի կողմից կրած վնասները և կատարված ծախսերը՝ անկախ դրանց բնույթից, և զերծ պահել Բանկին այդ կապակցությամբ առաջացած բոլոր պահանջներից:

4.10 Պահպանել սույն պայմանագրի 3.8. կետում նշված գաղտնաբառի գաղտնիությունը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն պայմանագրի կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.2 Բանկը պատասխանատու է իր մեղքով Հաճախորդի հաշիվներից գումարների սխալ կամ ոչ ժամանակին դուրս գրման, ինչպես նաև գումարների ոչ ժամանակին մուտքագրման համար

5.3 Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների անճշտության համար Բանկը պատասխանատվություն չի կրում: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից հաշիվների բացման ժամանակ ներկայացված փաստաթղթերից տարբերվող՝ փոփոխված անձը հաստատող կամ հիմնադիր փաստաթղթերով գործարքների չիրականացման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե այդ փոփոխությունների մասին Բանկը ժամանակին և սահմանված կարգով չի տեղեկացվել:

5.4 Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանց կատարումը կապված է անհաղթահարելի (ֆորս-մաժորային) իրավիճակների հետ:

5.5 Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ՝ Հաճախորդի դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու իր իրավունքների նկատմամբ:

5.6 Հաշիվներում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում՝ հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դրված կամ հաշվով գործառնությունները դադարեցված լինելուց:

5.7 Սույն պայմանագրով հաճախորդը հաստատում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվել են կամ կփոխանցվեն իր՝ Բանկում առկա հաշիվներով, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործողությունների հետ:

5.8 Սույն պայմանագրի 6.7 կետով տրված հայտարարության հետ կապված ցանկացած էական փոփոխության վերաբերյալ Բանկին չտեղեկացնելը կամ 5.5. կետով նախատեսված տեղեկատվությունը Բանկին չտրամադրելը հիմք կհանդիսանա Հաճախորդի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման համար:

5.9 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.8 կետով նշված գաղտնաբառի պահպանմամբ Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման, ինչպես նաև հանձնարարականում առկա սխալի, երկիմաստության կամ անհստակության պատճառով հանձնարարականի թերի կամ սխալ մեկնաբանման հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

5.10 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը, որ Բանկին հասցեագրված իր հեռախոսազանգերը ձայնագրվեն Բանկի կողմից: Միաժամանակ տալիս է իր համաձայնությունը, որ Բանկի աշխատակիցները պարբերաբար զանգահարեն իր հեռախոսահամար(ներ)-ին՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների կամ դրանց պայմանների փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրման պահից և գործում է Հաճախորդի հաշիվները Բանկում սպասարկելու ամբողջ ընթացքում:

6.2 Պայմանագիրը Հաճախորդի դիմումով լուծվում է ցանկացած ժամանակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդն ունի պարտավորություններ Բանկի նկատմամբ: Պայմանագրի լուծման դեպքում Հաճախորդի հաշիվներում եղած դրամական միջոցները մնացորդները տրվում են Հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում: Հաշիվը փակելու դեպքում Բանկի կողմից կատարվում են գանձումներ հաշվից՝ դրանք Բանկի սակագներով սահմանված լինելու դեպքում:

6.3 Հաճախորդի հաշիվը փակվում է նաև այն դեպքում, երբ Հաճախորդը երկու տարվա ընթացքում տվյալ հաշվի միջոցով չի իրականացրել որևէ գործարք և այդ հաշվին չկա մնացորդ: Հաշվի փակման մասին գրավոր տեղեկացվում է Հաճախորդին:

6.4 Հաշիվները փակվելու դեպքում Հաճախորդին վճարվում են նաև այդ պահին հաշվին հավելագրված բոլոր սոկոսները:

6.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում Պայմանագիրը միակողմանիորեն լուծելիս Բանկը պարտավոր է 10 /տաս/ օր առաջ տեղյակ պահել Հաճախորդին:

6.6 Պայմանագրի լուծումը հիմք է հանդիսանում Հաճախորդի հաշիվները փակելու համար:

6.7 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված այլ հարցերը կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում^a գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8 Պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար ուժ ունեցող օրինակներից, մեկական յուրաքանչյուր կողմին:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

ԲԱՆԿ՝

<<Յունիբանկ>> ԲԲԸ

ՀՎՀՀ 02559077

Հասցե՝ ք. Երևան,

Չարենցի փողոց 12- 53, թիվ 1-5

ՀՎՀՀ

Հեռախոս՝

Վարչության նախագահ՝

Վարդան Աթայան

ՀԱՃԱԽՈՐԴ՝

Հասցե՝

Տնօրեն՝



<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ Ա/Ձ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ -----

ք. Երևան

-- ----- 2014թ.

<<Յոնիբանկ>> բաց բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան Չարենց 122., թիվ 53, թիվ 1-5), ստոր՝ <<Բանկ>>, ի դեմս Վարչության նախագահ Վարդան Աթայանի, ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, և _____ (անձնագիր _____, տրված է -- -ի կողմից, - հասցե՝ ----, ----), այսուհետ՝ Հաճախորդ, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան՝

1.1 Բանկը Հաճախորդի անունով բացում է/են բանկային հաշիվ/ներ՝ հետևյալ հաշվեհամար/ներով

- / AMD /
- / EUR /
- / USD /

1.2 Սույն պայմանագրի 1.1. կետով բացված հաշիվներով գործառնություններն իրականացվում են ՀՀ գործող օրենսդրության, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի և Բանկի ներքին կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

1.3 Պայմանագրով բացված հաշիվներով կարող են իրականացվել հաշիվների վճարահաշվարկային և հաշվադրամարկղային սպասարկում:Նշված գործարքներն, օրենսդրությամբ սահմանված դեպքերում, իրականացվում են համապատասխան պայմանագրերի հիման վրա:

1.4 Հաճախորդի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է տոկոսագումար՝ Բանկում գործող հրապարակված Դրույքներ և սակագներին համապատասխան:Տոկոսագումարի հաշվեգրումը կարող է կատարվել նաև անհատական՝ պայմանագրային հիմունքներով՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

1.5 Հաշվեգրված տոկոսագումարները՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում գումարվում են Հաճախորդի հաշիվներում առկա դրամական միջոցներին:

1.6 Տոկոսների հաշվարկում օգտագործվող տարվա օրերի քանակն ընդունվում է 365 օր:

2. Բանկն իրավունք ունի՝

2.1 Մինչև հաշիվներում առկա միջոցների վերադարձը ինքնուրույնաբար տնօրինել այդ միջոցները՝ երաշխավորելով հաշիվների անարգել տնօրինելու Հաճախորդի իրավունքը:

2.2 Փոփոխել Բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ վճարվող տոկոսների չափը, որոնք ուժի մեջ կմտնեն Բանկի կողմից ընդունված որոշման հրապարակման պահից:

2.3 Մերժել և չկատարել Հաճախորդի կողմից տրված հաշվարկադրամարկղային գործառնությունների հանձնարարականները, եթե Հաճախորդի կողմից խախտվել է ՀՀ օրենսդրությունը, հաշվադրամարկղային փաստաթղթեր կազմելու, լրացնելու կարգը, ժամկետները և սույն պայմանագրի պայմանները:

2.4 Հաշիվների բացման, վարման, տարեկան սպասարկման համար,ինչպես նաև կատարած գործառնությունների դիմաց Հաճախորդի հաշիվներից միակողմանիորեն գանձել Բանկում գործող համապատասխան գործառնության համար սահմանված վճարը:

2.5 Հաճախորդի կողմից սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տվյալները չտրամադրելու կամ սխալ տվյալներ տրամադրելու կամ այդ տվյալներում փոփոխություններ լինելու դեպքում դրանց մասին Բանկին չտեղեկացնելու համար Հաճախորդից գանձել տույժ ----- /-----/ ՀՀ դրամի չափով:

2.6 Մերժել գործարքի կատարումը, եթե Հաճախորդի հաշվի գումարը չի բավարարում կատարված ծառայությունների դիմաց վճարելու համար:

4.3 Պահանջել և ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող վճարահաշվարկային և դրամարկղային գործառնությունների և այլ բանկային ծառայությունների իրականացման կարգի և պայմանների վերաբերյալ գործող կանոններին և հաստատված սակագներին:

4.4 Կարգադրել Բանկին իր հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այլ անձանց հանդեպ Հաճախորդի պարտավորությունների կատարման հետ:

4.5 Ստանալ իր հաշվի քաղվածքները և 'Բանկային ավանդների ներգրավման մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը՝

- էլեկտրոնային -----
- կամ կապի այլ միջոցներով _____
- Փոստային կապի միջոցով _____
- Բանկի տարածքում՝ առձեռն:

5. Հաճախորդը պարտավոր է՝

5.1 Բանկին տրամադրել իր վերաբերյալ ամբողջական և հավաստի տվյալներ /հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, փաստացի բնակության հասցե/, որով Բանկը հնարավորություն կունենա ցանկացած պահի կապ հաստատել իր հետ, ինչպես նաև այդ տվյալներում փոփոխություններ լինելու դեպքում այդ մասին անմիջապես տեղյակ պահել Բանկին՝ տրամադրելով փոփոխված տվյալները:

5.2 30 օրվա ընթացքում բանկին տեղեկացնել/տրամադրել FATCA (Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտ) կարգավիճակի փոփոխության վերաբերյալ տեղեկատվություն (ներառում է ԱՄՆ-ի հետ կապված ցանկացած տվյալի, հանգամանքի փոփոխություն):

5.3 Բանկի կողմից սահմանված կարգով լրացնել և Բանկին տրամադրել իր հաշվով գործառնություններ իրականացնող լիազորված անձանց ստորագրությունների նմուշները և պահանջվող այլ փաստաթղթերը:

5.4 Պահպանել ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն պայմանագրով և Բանկի ներքին կանոններով, որոշումներով և կարգերով սահմանված գործառնությունների իրականացման պահանջները:

5.5 Բանկի կողմից իրականացվող վճարահաշվարկային և դրամարկղային գործառնությունների, ինչպես նաև բանկային գործառնությունների համար մինչև գործարքի իրականացումը Բանկին վճարել միջնորդավճար՝ Բանկի կողմից սահմանված սակագներով: Կատարված ծառայության դիմաց գանձումը/վճարումը իրականացվում է Բանկի կողմից Հաճախորդի հաշիվներից գումարները դուրս գրելու եղանակով կամ Հաճախորդի վճարման հանձնարարագրի հիման վրա:

5.6 Հաշվով գործառնություններ կատարելու կարգադրություններ կամ հանձնարարականներ տալու դեպքում Բանկին ներկայացնել լիազորված անձանց անձը հաստատող փաստաթուղթ: Պայմանագիրը կորցնելու և լիազորված անձանց իրավասությունները դադարեցնելու դեպքում անհապաղ գրավոր տեղեկացնել Բանկին:

5.7 Բանկի պահանջով տրամադրել տեղեկատվություն իր անձնական հաշվով կամ հաշիվներով կատարվող ցանկացած գործարքի վերաբերյալ:

5.8 Հատուցել Բանկին սույն պայմանագրի 3.7. կետի շրջանակներում տրված հանձնարարականների ընդունման և/կամ դրանց համաձայն գործելու հետևանքով Բանկի կողմից կրած վնասները և կատարված ծախսերը՝ անկախ դրանց բնույթից, և զերծ պահել Բանկին այդ կապակցությամբ առաջացած բոլոր պահանջներից:

5.9 Պահպանել սույն պայմանագրի 3.8. կետում նշված գաղտնաբառի գաղտնիությունը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Սույն պայմանագրի կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ:

6.2 Բանկը պատասխանատու է իր մեղքով Հաճախորդի հաշիվներից գումարների սխալ կամ ոչ ժամանակին դուրս գրման, ինչպես նաև գումարների ոչ ժամանակին մուտքագրման համար:

6.3 Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների անճշտության համար Բանկը պատասխանատվություն չի կրում: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից հաշիվների

բացման ժամանակ ներկայացված փաստաթղթերից տարբերվող՝ փոփոխված անձը հաստատող կամ հիմնադիր փաստաթղթերով գործարքների չիրականացման արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե այդ փոփոխությունների մասին Բանկը ժամանակին և սահմանված կարգով չի տեղեկացվել:

6.4 Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանց կատարումը կապված է անհաղթահարելի (ֆորս-մաժորային) իրավիճակների հետ:

6.5 Բանկն իրավունք չունի որոշել և վերահսկել Հաճախորդի դրամական միջոցների օգտագործման ուղղությունները կամ սահմանել օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով չնախատեսված այլ սահմանափակումներ^a Հաճախորդի դրամական միջոցները սեփական հայեցողությամբ տնօրինելու իր իրավունքների նկատմամբ:

6.6 Հաշիվներում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի թույլատրվում սահմանափակել, բացի օրենքով նախատեսված դեպքերում՝ հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դրված կամ հաշվով գործառնությունները դադարեցված լինելուց:

6.7 Սույն պայմանագրով հաճախորդը հաստատում է, որ բոլոր ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվել են կամ կփոխանցվեն իր՝ Բանկում առկա հաշիվներով, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործողությունների հետ:

6.8 Սույն պայմանագրի 6.7 կետով տրված հայտարարության հետ կապված ցանկացած էական փոփոխության վերաբերյալ Բանկին չտեղեկացնելը կամ 5.5 կետով նախատեսված տեղեկատվությունը Բանկին չտրամադրելը հիմք կհանդիսանա Հաճախորդի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման համար:

6.9 Հաճախորդի՝ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջները որոնք ներկայացվում են Բանկի դեմ և կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ, ներկայացվում են պաշտպանության Ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը գերազանցող գույքային պահանջները ենթակա են լուծման դատական կարգով:

6.10 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 3.8 կետով նշված գաղտնաբառի պահպանմամբ Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման, ինչպես նաև հանձնարարականում առկա սխալի, երկիմաստության կամ անհստակության պատճառով հանձնարարականի թերի կամ սխալ մեկնաբանման հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

6.11 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը, որ Բանկին հասցեագրված իր հեռախոսազանգերը ձայնագրվեն Բանկի կողմից: Միաժամանակ տալիս է իր համաձայնությունը, որ Բանկի աշխատակիցները պարբերաբար զանգահարեն իր հեռախոսահամար(ներ)-ին՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների կամ դրանց պայմանների փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրման պահից և գործում է Հաճախորդի հաշիվները Բանկում սպասարկելու ամբողջ ընթացքում:

7.2 Պայմանագիրը Հաճախորդի դիմումով լուծվում է ցանկացած ժամանակ՝ բացառությամբ եթե Հաճախորդն ունի պարտավորություններ Բանկի նկատմամբ: Պայմանագրի լուծման դեպքում Հաճախորդի հաշիվներում եղած դրամական միջոցների մնացորդները տրվում են Հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում: Հաշիվը փակելու դեպքում Բանկի կողմից կատարվում են գանձումներ հաշվից՝ դրանք Բանկի սակագներով սահմանված լինելու դեպքում:

7.3 Հաճախորդի հաշիվը փակվում է նաև այն դեպքում, երբ Հաճախորդը մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվի միջոցով չի իրականացրել որևէ գործարք և այդ հաշվին չկա մնացորդ:

7.4 Պայմանագրի լուծումը հիմք է հանդիսանում Հաճախորդի հաշիվները փակելու համար: Հաշիվները փակվելու դեպքում Հաճախորդին վճարվում են նաև այդ պահին հաշվին հավելագրված բոլոր տոկոսները:

7.5 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված այլ հարցերը կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար ուժ ունեցող օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի իրավաբանական հասցեները
ԲԱՆԿ՝

<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հասցե՝ Երևան,
Չարենցի 122.թիվ 53, թիվ 1-5
Հեռախոս՝ 59-55-55

ՀԱՃԱԽՈՐԴ՝

անձնագիր -----

/ստորագրություն/

Ի.Ի.

/ստորագրություն

Ի.Ի.

**<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>>ԲԲԸ
Վարչության Նախագահ՝
պարոն Վարդան Աթայանին
մասնաձյուղի հաճախորդ**

Դ Ի Մ ՈՒ Մ

Հարգելի պարոն Աթայան.

Խնդրում եմ Ձեզ ընկերությանը թույլատրել օգտվելու Բանկ-Հաճախորդ համակարգից:

- Միայն դիտում (քաղվածք)
- Բոլոր հնարավոր գործարքների կատարում

Դիմող՝

2015թ.

հաճախորդային կողմ-

հեռ.-

Հավելված 5



ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

28/37

29/06/15

Բանկ-Հաճախորդ համակարգի տրամադրման վերաբերյալ

ք. Երևան

201 թ.

<<Յունիբանկ>> ԲԲԸ-ն (այսուհետև Բանկ), ի դեմս Վարչության նախագահ Վարդան Աթայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և " " ՓԲԸ, ի դեմս տնօրեն յանի (այսուհետև՝ Հաճախորդ), որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Օգտագործվող հասկացություններ

- Բանկ-Հաճախորդ՝ Բանկի և Հաճախորդի կողմից օգտագործվող ինտերնետային համակարգ, որը հանդես է գալիս որպես բանկի սեփականություն,
- Օգտագործող՝ Բանկի կողմից հաճախորդի համար բացված և համակարգում գրանցված նույնականացման անուն (Login name),
- Գաղտնաբառ՝ նույնականացման անունի հետ հաճախորդին տրամադրվող գաղտնաբառ
- Մուտքի իրավունք՝ Բանկի կողմից, հաճախորդի անունով բացված հաշիվներից և տվյալների բազայի որոշակի հատվածից օգտվելու իրավունք
- Վճարման հաճնարարական՝ հաճախորդի կողմից համակարգի միջոցով Բանկին ներկայացրած հանձնարարական,
- Առքի կամ վաճառքի հայտ՝ հաճախորդի կողմից համակարգի միջոցով Բանկին ներկայացրած արտարժույթի գնման կամ վաճառքի հայտ,
- Քաղվածքներ^a **հաճախորդի հաշիվների շարժի վերաբերյալ փաստաթուղթ:**

2. Պայմանագրի առարկան

գ Բանկը տրամադրում է Հաճախորդին բանկի սեփականությունը հանդիսացող Բանկ-Հաճախորդ համակարգից օգտվելու իրավունք:

գ Հաճախորդն իր հաշիվների կառավարումը կարող է իրականացնել Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով:

գ Բանկ-Հաճախորդ համակարգը տրամադրվում է անվճար:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

Բանկն իրավունք ունի՝

գ միակողմանի կերպով դադարեցնել սույն պայմանագիրը, եթե Հաճախորդը չի կատարում պայմանագրի պահանջները,

գ պահանջել Հաճախորդից փոխել գաղտնաբառը, եթե առաջացել է գաղտնաբառի հրապարակման վտանգ,

գ բլոկավորել Հաճախորդի օգտագործողներին, ստեղծված արտակարգ իրավիճակների դեպքում,

գ հաճախորդից պահանջել Բանկ-Հաճախորդ համակարգով ուղարկված հանձնարարականների թղթային կրկնօրինակները:

Բանկը պարտավոր է՝

գ բլոկավորել օգտագործողի նույնականացման անունը և/կամ գաղտնաբառը^a Հաճախորդի առաջին իսկ պահանջով,

գ մեկ բանկային օրվա ընթացքում իրականացնել Հաճախորդի կողմից ներկայացված վճարային հանձնարարականները և/կամ տարադրամի առքի և վաճառքի հայտերը,

գ ապահովել Բանկ-Հաճախորդ համակարգի անխափան աշխատանքը, Բանկը պատասխանատվություն չի կրում՝

գ Հաճախորդի կողմից սխալ մուտքագրված հանձնարարականների համար,

գ Հաճախորդի պատճառով գաղտնաբառերի հրապարակման համար,

գ Հաճախորդի ինտերնետ ցանցը սպասարկող կազմակերպության պատճառով առաջացած կապի խափանումների համար,

Հաճախորդն իրավունք ունի՝

գ Ցանկացած ժամանակ փոխել իր գաղտնաբառերը,

զ Պահանջել Բանկից նույնականացման անունների փոխարինում,
զ Պահանջել տվյալ օրը մինչև ժամը 15:00 իր կողմից ուղարկված հանձնարարականների կատարումը նույն օրվա ընթացքում, իսկ ժամը 15:00-ից հետո ուղարկված հանձնարարականների կատարումը^ա հաջորդ քանկային օրվա ընթացքում:

Հաճախորդը պարտավոր է՝

- զ Բանկի առաջին իսկ պահանջով փոխել իր օգտագործողների գաղտնաբառերը,
- զ Ապահովել Բանկի կողմից տրամադրած նույնականացման անունների և գաղտնաբառերի գաղտնիությունը,
- զ Բանկի կողմից օգտագործողների և/կամ գաղտնաբառերի բլոկավորման դեպքում պարզել բլոկավորման պատճառները և միջոցներ ձեռնարկել նման իրավիճակներից հետագայում զերծ մնալու համար:

2. Ֆորս-մաժոր

Բանկը պատասխանատվություն չի կրում Bank-Client համակարգի խափանումների համար, որոնք ստեղծվել են այնպիսի արտակարգ իրավիճակների պատճառով ինչպիսիք են^ա բնական աղետները (երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղ), պատերազմ, հեղափոխություն, Ինտերնետ գլոբալ համակարգչային ցանցի խափանում և այլն:

Պայմանագրի գործունեության ժամկետները և դադարեցման կարգը

- Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Հաճախորդի հետ կնքած 'Հաշվի սպասարկման պայմանագրի' դադարեցումը:
- Պայմանագիրը կարող է դադարեցվել միակողմանիորեն, նախապես, 15 օր առաջ, տեղեկացնելով մյուս կողմին:
- Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:
- Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն չգտնելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Բանկ

<<Յունիբանկ >>ԲԲԸ
0010, ք. Երևան

ՀՎՀՀ 02559077
Վարչության նախագահ
Վարդան Աթայան

Հաճախորդ
" " ՓԲԸ
Երևան,

ՀՎՀՀ
Տնօրեն ^ա

Հավելված 6

Հաստատված է ՀՀ ԿԲ Խորհրդի
 N50Ն որոշմամբ առ 26.02.2008
 Approved by CBA Board
 Resolution N 50N As of 26.02.2008
 Одобрено Советом ЦБ РА
 Решение N50Н 26.02.08г.

1.	<p>Հայաստանի Հանրապետությունում ունեն մշտական բնակություն կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվում են 1 տարուց ավելի</p> <p><i>Have permanent residence in the RA or reside in the RA for more than 1 year</i></p> <p><i>в РА имею постоянное место жительства или живу в РА более 1 года</i></p>	
2.	<p>Հայաստանի Հանրապետությունում բնակվում են 1 տարուց պակաս</p> <p><i>Have permanent residence in the RA for less than 1 year</i></p> <p><i>Живу в РА менее 1 года</i></p>	
3.	<p>Ունեն սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն ծախսերիս հիմնական մասը իրականացնում են Հայաստանի Հանրապետությունում</p> <p><i>Have seasonal work out of the RA but the main part of expenses make in the RA</i></p> <p><i>Имею сезонную работу вне РА, но большую часть расходов реализую в пределах РА</i></p>	
4.	<p>Ունեն սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունում, սակայն ծախսերիս հիմնական մասը իրականացնում են ՀՀ-ից դուրս</p> <p><i>Have seasonal work in the RA but the main part of expenses make out of the RA</i></p> <p><i>Имею сезонную работу в РА, но большую часть расходов реализую за пределами РА</i></p>	
5.	<p>Ուսանում են կամ բուժման նպատակով • փնվում են Հայաստանի Հանրապետությունում, սակայն հանդիսանում են այլ երկրի քաղաքացի</p> <p><i>Study or get treatment in the RA but I am a citizen of other country</i></p> <p><i>Нахожусь в РА с целью учебы или лечения, но являюсь гражданином другой страны</i></p>	
6.	<p>Հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ</p> <p><i>I am non resident in the RA</i></p> <p><i>Являюсь нерезидентом РА</i></p>	

Հաճախորդի ստորագրություն
 Signature/Подпись

Ամսաթիվ/ օօ/աա/տտտտ
 Date/Дата

Հավելված 7



<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՑՊԱՀԱՆՋ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ -----
ք. Երևան.**

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> Բաց բաժնետիրական ընկերությունը, (իրավաբանական հասցեն՝ << ք. Երևան Չարենց 122., թիվ 53, թիվ 1-5), այսուհետ՝ <<Բանկ>>, ի դեմս Վարչության նախագահ Վարդան Աթայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, և -----ը (գրանցման վկայական N -----, իրավաբանական հասցեն՝-----), ի դեմս տնօրեն ----- (անձնագիր. -----, տրված -----թ., -----ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության համաձայն, այսուհետ՝ <<Ավանդատու>>, ղեկավարվելով << քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ <<Պայմանագիր>>, հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Բանկը, ընդունելով Ավանդատուի կողմից տրված կամ վերջինիս համար ստացված ----- (----- AMD) գումար դրամական միջոցները (այսուհետ՝ Ցպահանջ ավանդ), պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով Ավանդատուին վերադարձնել Ցպահանջ ավանդի գումարը և -- % տարեկան տոկոսադրույքով տոկոսներ վճարել դրա դիմաց:
- 1.2 Ցպահանջ ավանդը ներդրվում է Ավանդատուի առաջին իսկ պահանջով այն վերադարձնելու պայմանով:
- 1.3 Ավանդատուի համար բացվող Ցպահանջ ավանդային հաշվի համարն է՝ -----:
- 1.4 Ցպահանջ ավանդի դիմաց տոկոսների վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս:
- 1.5 Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին տոկոսներ վճարելիս կատարում է եկամտահարկի գանձում՝ համաձայն << օրենսդրության:

2. Տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը

- 2.1 Բանկն Ավանդատուին Ցպահանջ ավանդի դիմաց տոկոսներ է վճարում սույն պայմանագրով սահմանված չափով՝ բացառապես << դրամով:
- 2.2 Բանկը Ցպահանջ ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև գումարն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը տոկոսների պարզ հաշվարկով:
- 2.3 Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր:

-----20--թ

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

- 2.14 Բանկն իրավունք ունի՝
- 2.15 Ինքնուրույնաբար տնօրինել Ցպահանջ ավանդի գումարը,
- 2.16 Միակողմանիորեն փոփոխել Ցպահանջ ավանդի համար վճարվող սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված տոկոսի չափը, այդ մասին Ավանդատուին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:
- 2.17 Ավանդատուի կողմից Ցպահանջ ավանդային հաշվի սպասարկման տարեկան վճարը չվճարելու դեպքում՝ այն անվիճելի և անակցեպտ (օրենքով սահմանված) կարգով գանձել Ավանդատուի՝ բոլոր բանկերում սպասարկվող հաշվարկային, ընթացիկ, արտարժույթային, ավանդային և այլ բանկային հաշիվներից,
- 2.18 Ավանդատուի Ցպահանջ ավանդային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և փակել հաշիվ,
- 2.19 Միակողմանիորեն լուծել պայմանագիրը, տվյալ օրվա դրությամբ Ավանդատուին վճարելով Ցպահանջ ավանդի գումարը և նրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները, եթե Ավանդատուն իր վարքագծով որևէ կերպ

(զանգվածային լրատվության միջոցներով, գրավոր կամ բանավոր հայտարարությամբ) փորձել է ազդել Բանկի վարկանիշի, գործարար համբավի, հեղինակության վրա և այլ ոչ գույքային իրավունքների վրա:

3.4.1 Բանկը պարտավոր է՝

3.4.2 Ցպահանջ ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել Ավանդատուին (ֆիզիկական անձի դեպքում) նրա առաջին իսկ պահանջով,

3.4.3 Ավանդատուին վճարել տոկոսներ Ցպահանջ ավանդի դիմաց Պայմանագրով սահմանված դրույքաչափերով,

3.4.4 Ապահովել Ավանդատուի ավանդային գործառնությունների գաղտնիությունը:

3.4.5 Ավանդատուն իրավունք ունի՝

3.4.6 Բանկից պահանջել վերադարձնելու Ցպահանջ ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսները,

3.4.7 Ցպահանջ ավանդի գումարին հավելագրել լրացուցիչ գումար:

3.4.8 Ավանդատուն պարտավոր է՝

3.4.9 Պահպանել ՀՀ օրենքների, բանկային կանոնների, Ցպահանջ ավանդների ընդունման մասին Բանկում գործող որոշումների, պայմանների և ընթացակարգերի պահանջները,

3.4.10 Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության դեպքում անհապաղ տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար,

3.4.11 Ցպահանջ ավանդը կամ տոկոսները ստանալիս Բանկ ներկայանալ անձը և իրավասությունները հաստատող փաստաթղթով և սույն պայմանագրով:

3.4.12 Վճարել Ցպահանջ ավանդային հաշվի սպասարկման Բանկի կողմից սահմանված տարեկան վճարը:

3. Եզրափակիչ դրույթներ

4.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

4.3 Ավանդի վերադարձն ապահովված է սեփականության իրավունքով, Բանկին պատկանող գույքով:

4.4 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի համաձայնությամբ:

4.5 Սույն պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Հատուկ դրույթներ

5.1 Ցպահանջ ավանդը կամ տոկոսները ստանալու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով Ավանդատուի անունից հանդես գալու իրավասությամբ օժտված անձինք կամ վերջիններիս կողմից պատշաճ կարգով լիազորված անձը:

5.2 Ավանդատուն կնքում է սույն պայմանագիրը՝ նախօրոք ծանոթ լինելով Բանկի կողմից Ցպահանջ ավանդների ընդունման պայմաններին:

5.3 Ցպահանջ ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Հաճախորդի բանկային հաշիվներից գանձվում է տարեկան սպասարկման վճար համաձայն Բանկում գործող դրույքաչափերի ու սակագների:

5.4 Սույն պայմանագիրը կազմվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

ԲԱՆԿ

ԱՎԱՆԴԱՏՈՒ

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>>ԲԲԸ

Վարչության նախագահ Վարդան Աթայան

Հասցե՝

Հեռախոս՝ _____

ստորագրություն
Կ. Տ.



<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ Ա/Ձ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑՊԱՀԱՆՋ ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ ----- ք.
Երևան ----- .20--թ.

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> բաց բաժնետիրական ընկերությունը, (իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան Չարենց 12շ., թիվ 53, թիվ 1-5), այսուհետ՝ <<Բանկ>>, ի դեմս Վարչության նախագահ Վարդան Աթայանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, և -----ը (անձ. ----- տրված -----թ. -ի կողմից, հասցե -----), այսուհետ՝ <<Ավանդատու>>, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ <<Պայմանագիր>>, հետևյալի մասին.

- 1. Պայմանագրի առարկան
- 1.1 Բանկը, ընդունելով Ավանդատուի կողմից տրված կամ վերջինիս համար ստացված ----- (----- AMD) գումար դրամական միջոցները (այսուհետ՝ Ցպահանջ ավանդ), պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով Ավանդատուին վերադարձնել Ցպահանջ ավանդի գումարը և 4 % տարեկան տոկոսադրույքով տոկոսներ վճարել դրա դիմաց:
- 1.2 Ցպահանջ ավանդը ներդրվում է Ավանդատուի առաջին իսկ պահանջով այն վերադարձնելու պայմանով:
- 1.3 Ցպահանջ ավանդն անվերապահորեն տնօրինելու և տիրապետելու իրավունք է վերապահվում նաև հետևյալ անձին ----- (անձ. ----- տրված -----թ. -ի կողմից, հասցե -----):
- 1.4 Ցպահանջ ավանդը հոգուտ երրորդ անձի ներդրված լինելու դեպքում այդպիսի անձ է հանդիսանում ----- (անձ. ----- տրված -----թ. -ի կողմից, հասցե -----):
- 1.5 Ավանդատուի համար բացվող Ավանդային հաշվի համարն է՝ -----:
- 1.6 Ցպահանջ ավանդի դիմաց տոկոսների վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս:
- 1.7 Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին տոկոսներ վճարելիս կատարում է եկամտահարկի գանձում՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

- 2. Տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը
- 2.1 Բանկն Ավանդատուին Ցպահանջ ավանդի դիմաց տոկոսներ է վճարում սույն պայմանագրով սահմանված չափով՝ բացառապես ՀՀ դրամով:
- 2.2 Բանկն Ցպահանջ ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրում է Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև գումարն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը տոկոսների պարզ հաշվարկով:
- 2.3 Բանկը տոկոսների հաշվարկը կատարում է՝ որպես բաժանարար հիմք ընդունելով տարին 365 օր:

- 3. **Կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝**
- 3.1 Բանկն իրավունք ունի՝
- 3.1.1 Ինքնուրույնաբար տնօրինել Ցպահանջ ավանդի գումարը,
- 3.1.2 Միակողմանիորեն փոփոխել Ցպահանջ ավանդի համար վճարվող սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված տոկոսի չափը, այդ մասին Ավանդատուին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:
- 3.1.3 Ավանդատուի կողմից Ցպահանջ ավանդային հաշվի սպասարկման տարեկան վճարը չվճարելու դեպքում^a այն անվիճելի և անակցեպտ (օրենքով սահմանված) կարգով գանձել Ավանդատուի՝ բոլոր բանկերում սպասարկվող հաշվարկային, ընթացիկ, արտարժույթային, ավանդային և այլ բանկային հաշիվներից,
- 3.1.4 Ավանդատուի Ցպահանջ ավանդային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և փակել հաշիվ,
- 3.1.5 Միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, տվյալ օրվա դրությամբ ավանդատուին վճարելով Ցպահանջ

ավանդի գումարը և նրա նկատմամբ հաշվեգրված տոկոսները, եթե ավանդատուն իր վարքագծով որևէ կերպ (գանգվածային լրատվության միջոցներով, գրավոր կամ բանավոր հայտարարությամբ) փորձել է ազդել Բանկի վարկանիշի, գործարար համբավի, հեղինակության վրա և այլ ոչ գույքային իրավունքների վրա:

3.2 Բանկը պարտավոր է՝

3.2.1 Ցպահանջ ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել Ավանդատուին (ֆիզիկական անձի դեպքում) նրա առաջին իսկ պահանջով,

3.2.2 Ավանդատուին վճարել տոկոսներ Ցպահանջ ավանդի դիմաց Պայմանագրով սահմանված դրույքաչափերով,

3.2.3 Ապահովել Ավանդատուի ավանդային գործառնությունների գաղտնիությունը:

3.3 Ավանդատուն իրավունք ունի՝

5.4.1 Բանկից պահանջել վերադարձնելու Ցպահանջ ավանդի գումարը և հաշվեգրված տոկոսները,

5.4.2 Ցպահանջ ավանդի գումարին հավելագրել լրացուցիչ գումար:

3.4 Ավանդատուն պարտավոր է՝

3.4.1 Պահպանել ՀՀ օրենքների, բանկային կանոնների, Ցպահանջ ավանդների ընդունման մասին Բանկում գործող որոշումների, պայմանների և ընթացակարգերի պահանջները,

3.4.2 Պայմանագիրը կորցնելու, հասցեի փոփոխության, անձնագրի կորստի կամ փոփոխության դեպքում անհապաղ տեղյակ պահել Բանկին՝ անհրաժեշտ ձևակերպումներ իրականացնելու համար,

3.4.3 Ցպահանջ ավանդը կամ տոկոսները ստանալիս Բանկ ներկայանալ անձը կամ իրավասությունները հաստատող փաստաթղթով և սույն պայմանագրով:

3.4.4 Վճարել Ցպահանջ ավանդային հաշվի սպասարկման Բանկի կողմից սահմանված տարեկան վճարը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

4.1 Ավանդի վերադարձն ապահովված է սեփականության իրավունքով, Բանկին պատկանող գույքով:

4.2 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի համաձայնությամբ:

4.3 Սույն պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Ավանդատուի՝ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջները, որոնք ներկայացվում են Բանկի դեմ և կապված են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ, ներկայացվում են պաշտպանության ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը գերազանցող գույքային պահանջները ենթակա են լուծման դատական կարգով:

1. Հատուկ դրույթներ

5.1 Ցպահանջ ավանդը կամ տոկոսները ստանալու իրավունք ունեն Ավանդատուն, օրենքով սահմանված կարգով Ավանդատուի անունից հանդես գալու լիազորությամբ օժտված անձը կամ վերջինիս կողմից պատշաճ կարգով լիազորված անձը:

5.2 Եթե Պայմանագիրը հանդիսանում է հօգուտ երրորդ անձի ներդրված բանկային ավանդի պայմանագիր, ապա այդ անձը Ավանդատուի իրավունքներ ձեռք է բերում Բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու կամ այդ իրավունքներից օգտվելու վերաբերյալ որևէ այլ եղանակով տեղեկացնելու պահից: Սույն կետով սահմանված երրորդ անձի իրավունքները դադարում են սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամանակի ավարտով:

5.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նշված անձի իրավունքները դադարում են սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետի ավարտով:

5.4 Մինչև Պայմանագրի 1.4. կետում նշված անձի կողմից Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին արտահայտվելը բանկային ավանդի պայմանագիր կնքած անձը կարող է օգտվել Ավանդի հաշվում իր մուծած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքներից:

5.5 Ավանդատուն կնքում է սույն պայմանագիրը՝ նախօրոք ծանոթ լինելով Բանկի կողմից Ցպահանջ ավանդների ընդունման պայմաններին:

5.6 Ցպահանջավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Հաճախորդի բանկային հաշիվներից գանձվում է տարեկան սպասարկման վճար համաձայն Բանկում գործող դրույքաչափերի ու սակագների:

5.7 Սույն պայմանագիրը կազմվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից՝

յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

**1. Կողմերի հասցեները
ԲԱՆԿ**

<<ՅՈՒՆԻԲԱՆԿ>>ԲԲԸ

Վարչության նախագահ Վարդան Աթայան

Հասցե՝

Հեռախոս՝ _____

ստորագրություն

Կ. Տ

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Հասցե՝

Հեռախոս՝ _____

ստորագրություն